«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ ***Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը մայրենի առարկայի դասավանդման գործընթացում***

Առարկան՝ ***դասվար***

Հետազոտող ուսուցիչ՝ Վ. Սարգսյան

Ուսումնական հաստատություն՝ « ՀՀ Արարատի մարզի Միփանիկի հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2022

Ինչպե՞ս իրականացնել ինտեգրված ուսուցումը եվ միջառարկայական կապերի կիրառումը տարրական դպրոցի մայրենիի դասընթացում:

Բովանդակություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2.ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԵՎ ԻՄԱՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

3.ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊՐՈՑԵՍՈՒՄ

4.ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

5.ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

6.ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից հայ դպրոցը մեկուսացված միավոր չէ և չէր կարող լինել այդպիսին:Այն իր ուսումնառության ընթացքում կազմակերպում է համաշխարհային դպրոցի փորձի ու նոր ձեռքբերումների հիման վրա:Ավանդական ուսուցման առաջավոր մեթոդների,մեթոդական եղանակների ու հնարների կողքին գործածության ոլորտ են բերվում արդիականնու ժամանակակիցը:

Անհնար է պատկերացնել այդ գործընթացն առանց ուսուցչի ու նրա աշխատանքի վերակառուցման ու կատարելագործման: Օրախնդիր հարց է,թե կրթական բարեփոխումների արդի պայմաններում ուսուցիչը որքանով պատրաստ ուսուցման մարտավարություններին ու նոր մեթոդների ընտրությանն ու կիրառությանը:

Զարգացնող ուսուցման մանկավարժությունը պահանջում է ուսումնական տարբեր առարկաների՝միմյանց մեջ ներթափանցման ուղիների մշակում:Այդ կերպ պայմաններ են ստեղծվում դասավանդման ընթացքում աշակերտների կողմից բազմաբաղադրիչ գիտելիքների ձեռքբերման համար: Դպրոցի տարրական դասարաններում միշտ էլ մեթոդական հիմնադնդիր է եղել միջառարկայական կապերի կիրառումը: Այն շատ դեպքերում կրել է մեխանիկական բնույթ:

Սակայն այլ են նորագույն մանկավարժական մոտեցումների ու ծրագրերի պահանջներ:

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԵՎ ԻՄԱՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Լեզուն մարդու կենսագործունեությունն ապահովող նախապայման է ու միջոց: Լեզվով են մարդիկ շփվում ու հաղորդակցվում շրջապատի հետ:

Լեզուն նաև մտածողության միջոց է, որով մարդը մտածում է, ընկալում, գիտելիքներ ձեռք բերում աշխարհի մասին: Ուստի անհրաժեշտ է լեզուն նախ և առաջ դիտարկել որպես լայն իմաստով իմացության մտածողության վերլուծության ու ընկալման, հետևաբար նաև մյուս ուսումնական առարկաների իմացության նախապայման ու միջոց:

Բանավոր ու գրավոր խոսքի մշակումը նպաստում է երեխայի ինքնարտահայտման, ինքնաճանաչման, ինքնակատարելագործման պահանջների ձևավորմանը:

Հատկապես տարրական դասարաններում սովորողները պետք է ծանոթանան ու ընթերցեն գրականության որոշակի ընտրանի, որը պետք ներառնի գրականության տարբեր ժանրեր, ինչպես նաև տարածության ու ժամանակ չճանաչող համամարդկային թեմաներ, խթանի սովորողների սերը ընթերցանության նկատմամբ:

Ըստ ծրագրային չափորոշիչների՝ լեզուների ուսուցման գերխնդիր կարող են համարվել.

ա) բանավոր խոսքի զարգացումը

բ)արդյունավետ հաղորդակցման կարողությունների ու հմտությունների զարգացումը:

գ) գրավոր խոսքի զարգացումը

դ) արդյունավետ ընթերցանության կարողությունների ու հմտությունների զարգացումը

ե) ճկուն լեզվամտածողության զարգացումը

զ) բանասիրական տարրական գիտելիքների համար հիմքերի ստեղծումը

է) հաղորդակցման ընթացքում լեզվական միջոցների ու օրինաչափությունների և կանոնների գիտակցումը:

Տարրական դպրոցում ընթերցանության դասերի ընթացքում պահանջվում է ուսուցանող նյութից բխող **ինտեգրում** նույն դասարաններում ուսումնասիրվող այլ առարկաների միջև **գրական ընթերցանություն- հայոց լեզու, գրական ընթերցանություն- երաժշտություն, նկարչություն, մայրենի լեզու- տեխնոլոգիա, մաթեմատիկա, ես և շրջակա աշխարհը և այլն:**

Այս ծրագրի իրականացումը պահանջում է և՛ գիտելիքներ, և՛ տեղեկատվություն, և՛ ստեղծագործական միտք ու վարպետություն:

Ուշագրավ է ինտեգրումը ընթերցանության և քերականության միջև: Տարրական դասարաններում դասագրքերը կազմված են հենց այդ սկզբունքով, որի պահանջն է իրականացնել հայոց լեզվի գործնական ուսուցում ընթերցանության նյութերի միջոցով:

Դրեյկի առաջարկած ուսումնական ծրագրի ինտեգրման ներքոհիշյալ երեք եղանակներն են.

1) Միջառարկայական մոտեցումը, որը կենտրոնանում է նույն թեման շոշափող առանձին առարկաների վրա, և այս դեպքում կենտրոնում դրվում է այն ընդհանուրը, որը գտնվում է ուսումնական ծրագրի մյուս կողմում:

2) Բազմառարկայական մոտեցում, որը կենտրոնանում է նույն թեման շոշափող առանձին առարկաների վրա, և այս դեպքում կենտրոնում դրվում են առանձին գիտություններ /ուսումնական առարկաներ/, որոնք միավորում են ընդհանուր թեմայի շուրջ:

3) Անդրառարկայական կամ իրական աշխարհի մոտեցում, որը կենտրոնանում է նույն թեման շոշափող առանձին առարկաների վրա: Սա վերաբերվում այն ուսումնական ծրագրին, որը դուրս է գալիս առարկաների սահմաններից:

Այս երեք մոտեցումների հիմքում ընկած են իմացաբանական լուրջ խնդիրներ:

Միջառարկայական կապերի մետեցման կողմնակիցները ուսումնական ծրագիրը կազմում են աշակերտների գիտելիքների շուրջ: Ի տարբերություն բազմառարկայական մոտեցման՝ այս դեպքում շեշտը թեմայից տեղափոխվում է դեպի առանձին առարկաների տիրույթները և կենտրոնանում առարկաների ընդհանրությունների վրա:

Միջառարկայական մոտեցումը շեշտը դնում է մետաճանաչողության վրա և սովորել սովորեցնում: Բովանդակության կարևորությունը նվազում է, և ուղենիշ հարցադրումը դառնում է .<< **Ինչպե՞ս կարող ենք աշակերտներին բարձրակարգ ունակություններ սովորեցնել:>>**

Աշակերտները սովորում են, որ բարձրակարգ հմտությունները ընդհանուր են և կարող են օգտագործվել նաև դասարանից-դասարան, ինչպես նաև դասարանից դուրս:Նման մոտեցման դեպքում սովորողը նկարում-պատմում է, միաժամանակ՝ երգում-վանկատում, մուտքագրում-ընթերցում: Երեխան պատմում է այն ամենի մասին, ինչն իրեն հետաքրքիր է, ինչն իրեն հուզում է: Պատմում է իր, ընտանիքի, հարազատների, տան մասին՝ ցուցադրելով նախապես թվային ֆոտոխցիկով արված լուսանկարները, դիտում՝ ընկերոջ ցուցադրած ֆոտոշարքը և տալիս իրեն հետաքրքրող հարցը, ֆոտոշարքից առանձնացնում որոշակի նկարներ, կոնկրետացնում խոսքը, ապա նկարագրում, բնութագրում, բացատրում, մեկնաբանում, հետո անվանում (տեսքտից անցում պարբերության, նախադասության, բառակապակցության, բառի, հնչյուն-տառի): Գրական նյութերի (ոտանավորներ, հեքիաթներ, խաղիկներ, հանելուկներ, առած- ասացվածքներ)

ուսուցման ժամանակ թվային միջոցների գործածումը նոր մեթոդների կիրառում է ենթադրում: Երեխան լսում ու դիտում է հեքիաթներն ու բանաստեղծությունները :
Միջառարկայական կապերի օգտագործումն ապահովում է դասավանդման նոր որակ ու արդյունավետություն՝ տարբեր
առարկաներից գիտելիքների, ուսումնական նյութերի և տեխնոլոգիաների միասնացման ճանապարհով:

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊՐՈՑԵՍՈՒՄ

Կրտսեր դպրոցում միջառարկայական կապերի օգտագործումն աշակերտների մտավոր ներուժի բացահայտման և ըստ ամենայնի զարգացման լուրջ հնարավորություններ է ընձեռնում:
Իրականության տարբեր երևույթների և ուսումնական առանձին առարկայի կտրվածքով ընդունված դրույթների մեկուսացված դիտարկումից անցում է կատարավում համակարգված և ամբողջական ուսումնասիրության:
Կրտսեր դպրոցում աշակերտը ծանոթանում է բնության գաղտնիքներին, հարստանում է նրա խոսքը, զարգանում է մտածողությունը: Հաղորդված գիտելիքները մի ամբողջություն դարձնելու, առանձին առարկաներից աշակերտի իմացությունները միմյանց շաղկապելու նպատակով դասերը պետք է հագեցած լինեն զարգացնող և ճանաչողական բնույթի բազմազան աշխատանքներով:
Դրանց իրականացման համար անհրաժեշտ է հաշվի առնել միջառարկայական կապերի ապահովման խնդիրը:
<u>Միջառարկայական կապեր</u> ճիշտ, բազմակողմանի և արդյունավետ օգտագործումը և՛ դյուրին է, և՛ դժվար:
Դյուրինէ, քանի որ այս օղակում դասավանդվող բոլոր առարկաները ուսուցամում է նույն ուսուցիչը: ԵՎ նա լավ գիտե, թե որ պահին և ինչպես դա պետք է կազմակերպել:
Դժվար է, քանզի ուսուցիչը պետք է զբաղվի ոչ՛ միայն աշակերտների ուսուցմամբ և դաստիարակությամբ, այլև հետևի աշակերտին՝ իր գործունեության բոլոր ձևերի մեջ:
Ժամանակակից գիտության բուռն զարգացմանը բնորոշ է գիտելիքների և՛ շերտավորումը, և՛ միավորումը:Իրականության մեջ, հասարակական կյանքում և բնության մեջ չկան առանձնացված առարկաներ, երևույթներ և գործընթացներ,

քանի որ դրանք գտնվում են որոշակի համակարգերի կազմում: Ուստի, որևէ ամբողջական երևույթի առանձին կողմերի ճանաչումը՝ առանց նրա մյուս կողմերի ճանաչման, չի կարող ամբողջական պատկեր տալ: Միանշանակ կարելի է պնդել, որ գիտելիքների միավորումն իմացության այն հիմնական ուղին է,որն երևույթների և ուսումնասիրության նկատմամբ ապահովում է համակարգված մոտեցում: Այդ առումով գիտելիքների միավորման և համադրման գործընթացը դպրոցի ուսումնական գործունեության մեջ ստանում է առանձնահատուկ կարևորություն: Դրան կարելի է հասնել տարբեր ուղիներով: Ու ղիներից մեկն այն է, երբ կապեր են ստեղծվում տարբեր ուսումնական առարկաների միջև, ինչը մանկավարժության մեջ կոչվում է ***<u>միջառարկայական կապեր:</u>*** Դրանց ստեղծման գաղափարը նոր չէ, և զանազան մտածողներ տարբեր ժամանակներում անդրադարձել են այդ խնդրին:Ըստ էության ուսումնական մեկ առարկայի ուսուցումը աշակերտին պատկերացում է տալիս իրական գիտելիքի միայն մեկ կողմի մասին: Հետևաբար գիտելիքների միավորումը և համադրումը ուսուցման գործընթացում մեծ չափով նպաստում է համակարգված գիտելիքների յուրացմանն ու աշակերտների աշխարհայացքի զարգացմանը: ***<u>Միջառարկայական կապերի միջոցով ուսուցումն աշակերտին և՛միտք է տալիս,և՛ մտածողություն, և՛ գիտելիք:</u>***

Գործնական դասավանդման ժամանակ միջառարկայական կապերի ստեղծվում են տարբեր ձևերով: Օրինակ ուսուցիչը նոր նյութը հաղորդելուց առաջ, աշակերտներին առաջարկում է վերհիշել, թե մյուս առարկաներից կամ առօրյայում ինչ գիտեն տվյալ նյութի մասին: Երբեմն կարելի է օգտագործել պրոբլեմային իրավիճակներ: Այնուհետև հետևողականորեն ուղղորդել պատասխանի որոնման ընթացքում և կազմակերպել նրանց ակտիվ ուսումնառությունը:Այս դեպքում սովորողն ակտիվ մասնակցություն է ունենումքննարկվող հարցի պարզաբանմանը և քայլ առ քայլ մոտենում է պատասխանին: Ուսուցիչն աշխատում է մի կողմից հենվել սովորողների հայտնի գիտելիքների վրա և նոր նյութը հասկանալի դարձնել, մյուս կողմից ստեղծել ուսումնասիրվող նյութի վերաբերյալ համակողմանի և ամբողջական պատկերացումներ:

Գործադրված ջանքերից սովորողի մոտ բարձրանում է հետաքրքրասիրությունը ուսուցանվող թեմայի նկատմամբ, իսկ դա իր հերթին նպաստում է նյութի արագ յուրացմանն ու մտապահմանը:

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

Տարրական դասարանների մայրենիի դասագրքերը կազմված են ինտեգրման սկզբունքով,որի պահանջն է՝ իրականացնել հայոց լեզվի գործնական ուսուցումըընթերցանության նյութերի միջոցով:Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ոչ թե ինտեգրացում,այլ ուսումնական առարկաների միջառարկայական կապերի բովանդակային և տրամաբանական մոտեցում: Արժեքայի ն համակար ոգ Ժամանակակից մանկավարժության մեջ ինտեգրումը սովորողի կողմից կոնկրետ որևէ երևույթի կամ բնագավառի ամբողջական ընկալման ձևավորումն է,որն իրականացվում է մասերը մի ամբողջի մեջ միավորելու և շրջապատի ու բնության երևույթների վերաբերյալհամապարփակ ու ամբողջական պատկերացում ձևավորելու ճանապարհով: Ժամանակակից մանկավարժության մեջ ինտեգրված ուսուցումը ներկայացվում է նոր դիտարկումներով:Այն իր բնույթով զարգացնող է,բովանդակությամբ՝բազմաբաղադրատարր,որը ներառում է թե՞զարգացման սահմանափակ հնարավորություններ ունեցող սովորողներին,թե՞միջառարկայական կապերի կիրառումը,թե՞բազմահամակազմային դասարաններում իրականացվող գործընթացները:Ինչպես նշում է Ե.Ա. Եկժանովան,՝Ինտեգրված ուսուցումը, հիմնվելով հատուկ և ընդհանուր կրթության սկզբունքների վրա,պետք է ունենա զարգացնող ,դաստիարակող բնութագիր,որը ենթադրում է սովորողների բարոյական գաղափարների ,վարքի համարժեք ձևերի մշակում՝ բոլոր մասնակիցների ներառմամբ կրթական գործընթացում՛:Հաշվի առնելով այն հանգամանքը,որ, ըստ, Վ.Վ. Կրաևսկու, դպրոցականների առաջադիմության անկումը գլոբալ խնդիր է ,որի լուծման համար անհրաժեշտ է գիտական մոտեցում,ընդ որում՝ոչ միայն մանկավարժական,պետք է նշենք ,որ ավելի է կարևորվում ինտեգրված ուսուցման կիրառումը՝որպես կրթության որակի բարձրացման գործոն:Համաձայնելով նաև Վ.Վ. Կրաևսկու այն տեսակետին,ըստ որի ՝ այս խնդրի լուծումը բազմաշերտ է և պահանջում է տարբեր մասնագետների՝մանկավարժների,սոցիոլոգների,հոգեբանների միջամտությունը,անդրադառնանք զարգացնող ուսուցման նշանակությանը ուսուցման արդյունավետության բարձրացման գործընթացում: Զարգացնող ուսուցման մանկավարժությունը պահանջում է ուսումնական տարբեր առարկաների ՝ միմյանց մեջ ներթափանցման ուղիների մշակում,որոնցով պայմաններ կստեղծվեն դասավանդման ընթացքում աշակերտների կողմից բազմաբաղադրիչ գիտելիքների ձեռք բերման համար :Ինտեգրված ուսուցումը

հիմնվելով միջառարկայական կապերի կիրառման վրա,հանդես է գալիս որպես սովորողների պոտենցիալ հնարավորությունները զարգացնող ուսուցում՝նպաստելով նրանց բնական ճանաչողության դրդապատճառների խթանմանը: Մայրենիի միասնացված յուրաքանչյուր դասի ընթացքում ուսուցիչը պիտի ապահովի գիտելիքի ինտեգրման բազմաթիվ դրվագներ:Այդ ինտեգրումը կարող է հանդես գալ ինչպես ներառարկայական ,այնպես էլ միջառարկայական կապերի դրսևորմամբ:Վերջինիս ապահովումը լայն հնարավորություն է բացում աշակերտի անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացման համար,քանի որ ժամանակակից պատկերացմամբ դպրոցը երեխային ոչ միայն պետք է սովորեցնի մտածել ու գրագետ խոսել,այլև իմացածը կյանքում կիրառել:Մայրենիի միասնացված դասընթացի միջոցով խնդիր է դրվում ապահովել ու հայոց լեզվի ուսուցման՝առարկայական չափորոշչով սահմանված նպատակներից մեկը,այն է՝՝սովորողի մեջ ժամանակակից գրական հայերենի նորմային համապատասխան խոսք կառուցելու մշակումը,իր խոսքը վերահսկելու ,բարբառային,ժարգոնային արտահայտություններից մաքրելու,մայրենի լեզվով ամենատարբեր բնույթի տեքստեր և գրականություն կարդալու և ինքնուրույն հասկանալու կարողությունների զարգացումը՛: Տարրական դպրոցում լեզվական ,քերականական գիտելիքների ուսուցումն իրականացվում է գործնական եղանակով:Գիտական սահմանումներ տրվում են այն չափով,որքանով գործնական վարժությունների հիման վրա աշակերտները հասնում են ընդհանրացումների և եզրակացությունների:Ուսուցիչը օգնում է նրանց ՝ եզրույթների ճանաչման և խոսքի մեջ դրանց կիրառման օրինաչափությունների գործում:Լեզվի գործնական ուսուցումը կատարվում է ընթերցանության համար նախատեսված ՝ բարբառայնությունից զուրկ ,գրական բարձր հայերենով բնագրերի հենքով,որոնք իրենց մեջ պարունակում են անհրաժեշտ քերականական նյութի օրինակներ:Ուսուցիչը չպետք է անտեսի այն հանգամանքը ,որ մեր օրերում աշակերտ-գեղարվեստական գիրք կապի խզման(կամ նվազագույնի հասնելու)ցավալի երևույթի պատճառով զգալի անջրպետ է գոյացել գրական և խոսակցական լեզվի միջև:Աշակերտները չեն տիրապետում քերականորեն ճիշտ խոսք կառուցելու պահանջներին:Նրանց խոսքի մեջ իշխող է դարձել ժարգոնային ,բարբառային,օտարաբան բառերի օգտագործումը:Այդ առումով էլ , սկսած տարրական դասարաններից,իրականացվում է լեզվի գործնական ուսուցում:Լեզվական տարբեր իրողությունների ուսումնասիրման նյութ է ծառայում գրական բնագիրը:Դրա մեջ դրսևորվում և փոխադարձ կապերի մեջ երևում են լեզվական տարրերն ու մակարդակները,քերականական առանձնահատկություններն ու օրինաչափությունները:Այսինքն՝ կազմակերպվում է

ինտեգրված ուսուցում,որի ընթացքում միջառարկայական կապերի հանգույցում հանդես է գալիս միմյանց հետ սերտորեն կապված երկու առարկաներ՝հայոց լեզու և գրական ընթերցանություն:

Հանրակրթական դպրոցի առանցքային առարկան մայրենի լեզուն է:Առանց նրա լավ իմացության անհնար է շարադրել որևէ առարկայի վերաբերյալ գիտելիք:Փորձը ցույց է տալիս, որ շատ դեպքերում աշակերտը չի կարողանում մաթեմատիկական գիտելիքը շարադրել հայերենի վատ իմացության պատճառով:Միաժամանակ լավ դրված հայերենը աշակերտի խելացիության անսխալ վկայությունն է:

Այս առումով էլ, սկսած տարրական դասարաններից իրականացվում է լեզվի գործնական ուսուցումը: Լեզվական տարբեր իրողությունների ուսումնասիրման նյութ է ծառայում գրական բնագիրը: Դրա մեջ դրսևորվում և փոխադարձ կապերի մեջ երևում են լեզվական տարրերն ու քերականական առանձնահատկությունները: Այսինքն՝ կազմակերպվում է ինտեգրված ուսուցում, որի ընթացքում միջառարկայական կապերի հանգույցում հանդես են գալիս միմյանց հետ սերտորեն կապակցված երկու առարկաներ հայոց լեզու ***/լեզվական նախագիտելիքների սկիզբը դրվում է հենց տարրական դասարաններում/ և գրական ընթերցանություն /տարրական դասարաններում գերխնդիր է կարդալու որակական հատկանիշների ձևավորումն ու զարգացումը, որի մեջ ներառվում է և՛ հասկանալով կարդալը, և՛արտահայտիչ, սահուն , արագ կարդալը:***

Նկատելի է, որ գործող դասագրքերում երբեմն քերականական նյութը հրամցվում է ոչ տեղին, այսինքն ընթերցանության համար նախատեսված այնպիսի բնագրի կողքին, որի մեջ չկան համապատասխան օրինակներ: Ուսուսիրն այս դեպքում պետք է ճկուն կերպով մայրենի լեզվի գործնական ուսուցում իրականացնի այն նյութերի հենքով, որոնցում դրա պայմանները կան:

4-րդ դասարանում ,,Կոչական,, թեման ուսուցանելու ժամանակ հենվում ենք այն բնագրերի վրա, որտեղ կան ու հարուստ են կոչականներով: Հենց այս նյութերի ուսուցման ընթացքում էլ աշակերտները գործնական աշխատանք են կատարում կոչականի վերաբերյալ՝ճանաչելով կոչականը խոսքի մեջ, դրա շարադասությունը, կետադրությունը և կազմության ձևերը:

Օրինակ ,,Բաղդատի խալիֆը և իմաստուն ծերունին,,, նյութի ուսուցման ընթացքում ընթերցանության և հայոց լեզվի միջև միջառարկայական կապ կարելի է ստեղծել հենց կոչականի շուրջ: Հարցաշարը կարելի է կազմել հետևյալ բովանդակությամբ .

Ովքե՞ր են հանդես գալիս այս պատմվածքում:

Ինչպե՞ս է կառուցված պատմվածքը ,ընտրի՛ր ճիշտ տարբերակը.

ա) նկարագրության ձևով

բ) երկխոսության ձևով

գ) պատմական ձևով

Ընտրվում է ,,բ,, տարբերակը, որի շուրջ համառոտ ընթացիկ զրույց է կազմակերպվում՝,,Ի՞նչ է նշանակում զրույց, երկխոսություն,, թեմայով:

Նմանատիպ վարժությունների միջոցով ձեռք բերված տեղեկությունները վերածվում են հմտությունների և ուսուցիչն արդեն հանձնարարում է նոր աշխատանք՝գրել կապակցված տեքստ կոչականների գործածությամբ:

Կարելի տալ առաջին երկու նախադասությունները՝ պահանջելով շարունակել, կամ վերջին նախադասությունները՝ պահանջելով գրել սկիզբը:

Աշխատանքային այս ձևով հստակ ընդգծվում է մանկավարժական այն ռազմավարությունը , ըստ որի գիտելիքներից բացի սովորողի մեջ անհրաժեշտ է զարգացնել դրանք կիառելու իրական կարողություններ ու հմտություններ, ընդգրկել նրան ճանաչողական գործունեության մեջ, վեր հանել նրա ներքին ուժերն ու հնարավորությունները:

Հետևաբար ուսուցման արդյունավետությունը չափվում է ոչ միայն և ոչ այնքան աշակերտի յուրացրած գիտելիքներով, որքան նրա ձեռք բերած կարողություններով:Շեշտը դրվում է արդյունքի վրա, այսինքն՝ի՞նչ կարող է նա անել:Այս ամենը հնարավոր է դառնում, երբ՝

<u>ա) ուսումնառության ընթացքում սովորողը պասիվ ընկալողից վերածվում է ակտիվ և գործուն մասնակցի /աշակենտրոն ուսուցում/</u>

<u>բ) ուսուցիչը հրաժարվելով սովորեցնողի, վերահսկողի, խրատողի իր դերից՝ դառնում է այդ գործընթացը կազմակերպող, խորհրդատու, և աշակերտի հետ միասին՝ որպես գործընկեր, մասնակցում է որոնողական աշխատանքներին/ ստեղծում պրոբլեմային իրավիճակներ/</u>

Այսօր փորձ է արվում ստեղծել ուսուցման այնպիսի ռազմավարություն, որը հիմնվում է ճանաչողության տեսության ժամանակակից նվաճումների վրա:

Ինտեգրված դասի ընթացքում աշակերտների որոնողական ու համագործակցային ձևերն ավելի ակտիվ բնույթ են կրում: Ինտեգրված առարկաների և դրանց փաստացինյութի կատարվող աշխատանքները բխում են բնագրի բովանդակությունից, թեմայից, լեզվից:

Նման աշխատանքային ձևերը շարժում են աշակերտների հետաքրքրությունը և նրանց մղում նոր գիտելիքների ձեռք բերմանը:Համագործակցային եղանակով աշխատելու դեպքում բարձրանում է յուրաքանչյուրի պատասխանատվության զգացումը, արթնանում է ուրիշներից ետ չմնալու ցանկությունը:

<u>Այս բոլորը միմյանց գումարվելով՝ աշակերտներին տալիս է այն անհրաժեշտը, որը կոչվում է գիտելիք:</u>

Դրանք երեխաներին հմտացնում են նաև ներկայի ու ապագայի համար կարևորություն ունեցող կենասաձևի մեջ:Այն է ,,ինչպ՞ս սովորել:

Գրական-պատմաշխարհագրական հարցաշարերի կազման համար տվյալներ պարունակող բավականին թվով գեղարվեստական բնագրեր կան տարրական դպրոցի գործող ընթերցարաններում:

Ուսուցիչը խիստ ուշադիր պետք է լինի և ստեղծագործաբար օգտվի այդ հարցաշարի հնարավորությունից:Հասկանալի է,որ տարրական դասարանների աշակերտները լիովին ի վիճակի չեն լինի գտնելու

Հարցաշարերում առաջադրված բոլոր հարցերի պատասխանները:Այս դեպքում արխատանքը կրելու է՝

աշակերտ-ծնող

աշակերտ-տեղեկատվական գրականություն

աշակերտ -ուսուցիչ

աշակերտ-աշակերտ զույգերով կամ խմբային կիրառության ձևերը:

Միջառարկայական կապերի ինտեգրումը ուսուցչին հնարավորություն է ընձեռնում լրացնել աարակերտների գիտելիքների պակասը պատմությունից, հայրենի բնությունից, բնագիտությունից:

Դասվարները լայն հնարավորություն ունեն անհրաժեշտության դեպքում կազմակերպել համակցված դասեր՝ավելի խորացնելով միջառարկայական կապերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման այս ռազմավարությունը նպաստում է աշակերտների բազմաբնույթ մտածողության զարգացմանը:Նրանց առջև լայն հնարավորություն է ստեղծվում առարկաների միջև առկա կապերի ցուցուադրմամբ հաղորդակցվել գիտության ու կյանքի տարբեր բնագավառների, զանազան երևույթներին, պատճառահետևանքային կապերին ու օրինաչափություններին: Այդ պատճառով նրանք աստիճանաբար վարժվում են ինքնուրույն աշխատանքին,որը կարևոր ուղենիշ է դառնալու նրանց հետագա ամբողջ կյանքի ընթացքում շարունակական կրթության խոչընդոտները հաղթահարելու, ինքնուրույն ուսուցման,, կատարելագործմանու բազմակողմանի զարգացման առումով:

Միջառարկայական կապերի օգտագործումն ու ապահովումը <<Մայրենիի, <<Մաթեմատիկայի>>, <<Հայոց լեզվի>>, <<Ես և շրջակա աշխարհի>>, <<Երաժշտություն>>, <<Կերպարվեստ>>, <<Տեխնոլոգիա>> առարկաների շրջանակներում արդեն իսկ անհրաժեշտույուն է: Պետք է տեսնել սովորողների առկայծող աչքերը, նրանց ոգևորությունն ու հիացմունքը: Հետաքրքրության շրջանակը այնքան մեծ է, որ նույնիսկ զանգի հնչելու ժամանակ աշակերտներն ինքնամոռաց քննարկումներ են կատարում և ափսոսանք հայտնում, թե ինչքան շուտ ավարտվեց դասը:

Ունենալ արդյունավետ դպրոց՝ նշանակում է ունենալ կայացած պետություն, գիտելիքները կյանքում կիրառող անհատ, բազմակողմանի զարգացած հասարակարգ:Իսկ այս ամենի հիմքը գցողը մենք՝ ուսուցիչներս պետք է լինենք:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները
Ձեռնարկ ուսուցիչների համար:Երևան-2004թ.

2.Նախաշավիղ 2002թ /5-6/, 2005թ. /3-4/, 2008թ. /4-5/

3.Ինտեգրված թեմատիկ միավորներ
Ձեռնարկ տարրական դպրոցի ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման համար:

4. Մայրենի-2-4 –րդ դասարաններ:Հեղինակներ՝ Վաչագան Սարգսյան, Կարինե Թորոսյան